

փափուկ հանապազանի խոսուպճիւն՝ նուազեալ յուշոյ յերկիր զլորի, զորմէ ասէին. էնկինէ սալալըմ կէմի, սուրէլըմ զէՖք իլէ, տ՛ւր եա ա՛մէլէլըմ, տուր եա՛, տուր եա՛, տուր եա՛, եւ որք սոքօք հետեւի: Եւ յարգելարանին զհրաժարականին ծանեալ զժամանակն արքայի, Թէլլըմ այրըլտըմ սէնտէն այրըլտըմ, գոչելոյ՛ ողբս ոգեալ յոյժ ողորմելի: Աւա՛ղ բախտին առաջնոյ եւ վերջնումս նուազիս վաղճանի. եթէ ոք ճշգրտապէս տրամախոհեսցէ զկենցաղ մարդկութեանս յոյժ թշուառալի, որ միտք մեր ցնդի: Սա ըստ քաղցրազոյն բարուցն անպատմելի եւ զիմացն ախորժելի ի Գօռէլ յազգէ վերընծիւղեալ որ է ինձ յոյժ զարմանալի, միայն մասամբք ունել զպակասութիւն՝ զառեալն ոչ վճարել անհոգ ի մտի, եւ միշտ ըստ բարուցն եւ կայր զուարթալի, յօրանալով ըստ սովորութեանն յար ի բարեկենդանի: Քանզի ոչ բաւականա՛նայր ծախք փաշայից իւրոց պարգեւի եւ պարտական մնայր այնու ամենի. եւ ի վէրէմ ցաւի ըմբռնեալ վեց ամսօք լինի եւ վեց ամսօք եւս զմահճօքն անկեալ եւ արդ մեռանի: Եւ յիսպանմանէ Սուլթան Իպրահիմի որ երեսուն եւ չորս ամք ասի, եւ ինքն էր յայնմ եղանակում մերձ ամաց իբրու քսանի: Պու տա պօյլէճէ կէչի վէրտի:

ԺԹ. — Մոռացաք զրել զեկեալ դեսպանն ի գուսլէն Մօսկօվաց, որ յԱզախ մեռեալ եւ որք ընդ նմա եւ այլք ի ճանապարհացն տկարացեալ ի պղտորեալ օդոց ծովու եւ ի ցամաքի: Եւ նօտարն ծանուցանէ զուալին իւրոյ զեղեալն, որոյ եւ նա գրէ եւ հրամայէ կարգիլ ի տեղի դեսպանին, եւ զթղթերս վէզիրին եւ թագաւորին մատուցէ եւ ամենայն բանք նորին լիցի ընդունելի նմա: Որ եւ գայ իջեւանի հանգէպ վանիցն Երուսաղէմի պատրիարքարանին Յունաց ի Ֆէնէր որպէս թէ արք երեսունք: Եւ ի մուտն Ֆէտրարի եմուտ